ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐ

ԺԱՆ ՊԻԵՐ ՄԱՀԵ
(Ֆրանսիա)

ՎԱՉԱԳԱՆ Գ ԲԱՐԵՊԱՇՏԸ ԵՒ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ

484 թ. Նուարսակի խաղաղութեան պայմանագրի հետեւանքով Աղուանից բոլոր իշխանների համաձայնութեամբ, Վաչէ արքայի եղբօրորդին՝ Վաչագանը, հռչակւում է Աղուանքի թագաւոր, Պերոզ Շահանշահի յաջորդի՝ Վաղարշի կողմից: Նրա թագաւորութիւնն ընդգրկում է նախկին Սասանեան մարզպանութիւնը, որն ստեղծուել էր մօտաւորապէս 430 թ., այսինքն՝ Մեսրոպ Մաշտոցին ծանօթ Արսուաղէն արքայի մահուանից յետոյ: Բաղկացած է ո՛չ միայն Կուր գետի ձախ ափի վրայ տարածուող բուն Աղուանքից, այլեւ 428 թ. Արշակունեաց թագաւորութեան վերացումից յետոյ Մեծ Հայքից անջատուած Ուտիքի և Արցախի աջափնեայ նահանգներից:

Յիսունամեայ պարսկական տիրապետութիւնից յետոյ, աշխարհի բոլոր շրջանները՝ թէ՛ Ուռնայր արքայի օրերով քրիստոնէացած աղուանախօս գաւառները և՛ թէ՛ հայերէնախօս նահանգները, համարեա թէ հեթանոսութեան էին վերադարձել: Աւելի ճիշտն ասած, ընտրանու մէկ կէսը զրադաշտականութիւնն էր ընդունել սասանեան վարչութեան մասնակցելու նպատակով, իսկ ժողովուրդը դիւթական և կախարդական հին սովորութիւններն էր վերագտել: Գահ բարձրանալուց յետոյ Վաչագանն իսկոյն ամէն ջանք թափեց հեթանոսութիւնն արմատախիլ անելու և քրիստոնէութիւնը վերստին հաստատելու համար: Սակայն նա չփորձեց աղուաներէն լեզուով Աբսուաղէն արքայի գրի առնուած հին ծիսաբանութիւնը վերականգնել: Բանն այն է, որ մտքովն անգամ չի անցել: Վաչէ հօրեղբօրը նման, նա հայախօս է եղել: Յենուելով հարաւային նահանգների հայախօս աւագանու վրայ, կրօնական խորհուրդներ էր ուզում Մամիկոնեանների եպիսկոպոսից՝ Աբրահամից (I, 25 էջ 88) և աշխարհը կառավարում էր անկասկած իր գահը պաշտպանող Վահան Մամիկոնեանի համաձայնութեամբ: Իր օրերով Աղուանից եկեղեցին ամբողջովին հայախօս դարձաւ:

Վաչագանի մահուանից կարճ ժամանակ յետոյ 510ական թուերին արքայի վարքը յօրինած պատմագիրը (ՀԱ I, 15-26) շեշտը դնում է գլխաւորապէս նրա բարեպաշտութեան և մասունքների պաշտամունքի վրայ: Ամարասում յայտնաբերելով Լուսաւորչի թոռան՝ սուրբ Գրիգորիսի ոսկորները, կառուցեց ցայսօր պահպանուած դամբարանը և փառաւորեց Աղուանքի միութիւնն, ինչ-

պէս նաև Հայաստանեայց և Աղուանից եկեղեցիների անքակ կապերը մարմնացնող սուրբ վկային:

Թէպէտև այդ խորհրդանիշը քաղաքական մեծ նշանակութիւն ունէր, սակայն սրանով լրիւ չի բացատրւում արքայի կրօնասէր վերաբերմունքը: Աղուանքի առաջին կաթողիկոսի մասունքների գիւտը վերջին փուլն է մի երկարատև երկարաշունչ ծրագրի: Սրբութիւնների այդպիսի մի ճարտարագիտութիւն ընթռնելու համար պէտք է նախ և առաջ մտածել աղուանական հեթանոսութեան բնոյթի և գրական շրջապատի մասին:

***

Թէ՛ Ստրաբոնը և թէ՛ VI դարի հայ ժամանակագիրը համաձայն են՝ ճանաչելով, թէ Աղուանից հեթանոսական ծեսերը չեն կատարուել քար տաճարներում, այլ բնութեան մէջ, ոգիներին և չաստուածներին պատկանող անապատ վայրերում. օրինակ, Լուսին դիցուհու՝ **Հեկոթէայի** զոհարանը, որտեղ ամէն տարի մատուցանում էին մարդկային զոհեր, գտնւում էր Վիրքերին սահմանամերձ անտառներում (XI, 4,7): Նմանապէս մատնահատների արիւնաքամ աղանդը կատարում էր մաշկման ծեսերը «Կուր գետի ափին մի ապահով անտառում» (I, 18):

Հեթանոսական Աղուանքում կառուցուած տաճարների գոյութիւնն այնքան նուազ հաւանական էր, որքան որ բնիկ Աղուաններն անհմուտ շինարարներ էին: Ուստի և Բիւզանդացիների դէմ վարած Բագաւանի ճակատամարտից առաջ, այն ժամանակ դեռ հեթանոս Ուռնայր արքան հրամայում է զինուորներին. «Լաւ յիշեցէք, յոյն մարտիկներ ձերբակալելիս, թէ պէտք է նրանցից այնքան շատ ողջ պահել, որքան հնարաւոր կլինի, որովհետև նրանց գերեվարելու ենք Աղուանք, որպէսզի այնտեղ աշխատեն որպէս քարտաշ կամ որմաշէններ մեր քաղաքների, պալատների և ուրիշ պիտոյքների համար» (V, 4): Հետևաբար Աղուանից աշխարհի չաստուածները միշտ այնպիսի սրբավայրերից ստիպուած պիտի բաւարարուէին, որոնք մարդկային արուեստներին ոչինչ պարտական չէին:

Այս հանգամանքը յատկապէս դժուար էր դարձնում աղուանական հեթանոսութեան բնաջնջումը: Եթէ ընթերցասէր, իր սեպհական Ռուտակ գիւղում դպրոց բացող Վաչագանը փորձէր Ագաթանգեղոսի «Հայոց Պատմութիւնից» ներշնչուել՝ սուրբ Տրդատի և սուրբ Լուսաւորչի վերաբերմունքն ընդօրինակելու համար, անպայման պիտի զգար, թէ ինչքան աւելի բարդ էր ի՛ր, քան թէ իր նախորդների գործը. IV դարի Հայաստանում չաստուածները քար պատերով և փայտեայ գերաններով մեհեաններում էին բնակւում: Բաւական էր դրանք հրդեհել, կործանել, յատակել (Aa 778), որպէսզի տնանկած դևերը փախչէին: Փ[illegible]ելով բագինները և ձուլածոյ կամ քարագործ կուռքերը և Յու-

նաստանից բերուած չաստուածների արձանները՝ հնարաւոր էր տեղն ազատել ամէն վնասակար ազդեցութիւնից: Բայց ի՞նչ միջոցի հարկաւոր էր դիմել ո՛չ տաճար, ո՛չ դէմք, թեկուզ ո՛չ անուն չունեցող դևերի դէմ, որոնք սփռուած են եղել ամբողջ աշխարհում:

VI դարի պատմագիրը ցոյց է տալիս, թէ ինչպէս թագաւորը նախ և առաջ աշխատեց հեթանոսական պաշտամունքների հասարակական հիմունքները քայքայել: Արքայութեան ամէն գիւղում, այսինչ կամ այնինչ գերդաստան, սերունդէ սերունդ մէկ-երկու անդամ է ունենում՝ թէ՛ տղամարդ, և՛ թէ կնամարդ, որը գործում է որպէս մի տուեալ դիցականութեան քուրմ, գուշակ կամ վհուկ՝ մասնակցելով գաղտնի ծեսերի: Մատնահատների դէպքում Վաչագանը ականատեսների կողմից մատնուած աղանդաւորներին հարկադրում է իրենց կատարած ծիսական ոճիրը դատական մի վերակառուցման ենթարկելու: Այսպիսով, ստիպուած են յաչս բոլորի այն արարքները կատարել, որոնք սկզբունքօրէն յայտնի էին միայն աղանդի նուիրագործեալ անդամներին:

Բացի այդ, դէպքերի նոյն բեմադրութիւնը կրկնւում է գիւղից գիւղ այն գերդաստանների տների առջև, որոնց անդամներից մէկը անդամակցել է աղանդին: Յանցաւորները սպանւում են նոյն չարչարանքով, ինչին ենթարկում էին աղանդի զոհերին: Գաղտնիքի քողախնդրութիւնը խմբին զրկում է իր համայնական կապից:

Այս օրէնքների գործադրութիւնը պահանջում է սարկաւագներ, քահանաներ, քորեպիսկոպոսներ և եպիսկոպոսներ ընդգրկող եկեղեցական հսկողութեան մի ընդարձակ ցանկ տեղաւորելը, որը շատ նման է Արևմտեան երկրների միջնադարեան կրօնաքննութեան:

Սակայն անօգուտ է ամէն վայրից վանել դիւական ազդեցութիւնները, եթէ ազատագրուած տարածութիւնները իսկոյն չզբաղեցուեն սրբութեան ուժերով: Ահա այստեղ են միջամտում մարտիրոսների մասունքները: Նախ և առաջ այդ սրբերը Քրիստոսի ականատես վկաներ են: Օրինակ, Յովհաննէս Մկրտիչն ասել է. «Տեսի և վկայութիւն եմ բերում»: Սուրբ Ստեփանոսը տեսաւ, բաց երկնքի միջով, փառաւոր գահում նստած Քրիստոսին: Սուրբ Հռիփսիմէն լսեց աստուածային ձայն և այլն: Այդ պատճառով մարտիրոսներն իշխանութիւն ունեն ո՛չ միայն որպէս հաւատի քաջ նահատակներ, իրենց անցած վայրերը սրբելու կամ սրբացնելու, այլև իրենց հերոսական զոհաբերութեան շնորհիւ որևէ տեղ (թեկուզ Երուսաղէմից շատ հեռու) Աստծու Բանի մարդեղութեան յատուկ և արդիւնաւէտ մի նշանի վերածելու: Ի դէպ, Յիսուսի մէջ մարմնացած Բանը ուխտ է կնքել ոչ թէ մի ազգի և սերունդի, այլ հողածին մարդկանց բոլոր ազգերի հետ, բոլոր ժամանակաշրջաններում: Աստծու Որդու մարդեղութիւնը պէտք է արմատներ արկանի աշխարհիս բոլոր ժողո-

վուրդների մէջ և ահա այդ ժողովուրդներից ծագած մարտիրոսներն են այդ արմատներն արկանում իրենց վկայութեան վայրերում:

***

Որպէս Յակոբ Տեառն եղբօր աշակերտի՝ Եղիշայի արիւնով է ողողուած քրիստոնէական աշխարհը, Աղուանքը հեթանոսների և պարսիկների հալածանքների հետևանքով ունեցել է բազմաթիւ վկաներ: Միայն թէ յիսուն տարուայ ընթացքում տիրող բռնակալութիւնն ու տգիտութիւնը այդ սրբերի անունները ջնջել և մոռացման են մատնել: Սակայն գերեզմանների հողի ներքո նրանք դեռ կան և ուզում են յայտնաբերուել: Վաչագանի արժանիքն այն է եղել, որ ուշադիր լսեց նրանց, ով լինելը ճանաչեց և ամենուրեք սփռեց նրանց վկայութեան փրկարար ուժը:

Ժամանակագրի պատմուածքը յօրինուած է կարծես թէ Da Vinci Code-ի նման, այսինքն՝ որպէս իրար հետևից լուծուելիք հանելուկների մի յարմարանք: Ճանապարհի ամէն մի փուլին նոր մասունքներ կամ նոր նշաններ են հանդիպում, ինչպէս նաև նոր ցուցմունքներ՝ յաջորդները գտնելու համար: Վերջապէս վերանորոգւում են յիշողութեան շղթայի այն օղակները, որոնք թոյլ են տալիս մինչև Աղուանքի առաջին կաթողիկոսին՝ առաքելական շրջանի և հաւատքի արմատացման միջև կամուրջ հանդիսացող Սուրբ Գրիգորիսին:

Իմաստ և ինքնութիւն որոնող անանուն մի սրբութեան առաջին յայտնուելը տեղի է ունենում Ամարասի շրջակայքում գտնուող Ցրի-ի կիսաւէր եկեղեցում: Այնտեղ հաւաքուող սքանչելագործ հողը բուժում է իրենով քսուող հիւանդներին, նոյնիսկ եթէ հեթանոս լինեն և անգամ չգիտեն՝ թէ ի՞նչ է բուժող սրբի անունը: Դժգոհելով տեսնելուց, թէ այն թափուր աւերակները տեղացիների համար դարձել է մի սրբավայր, մի պարսիկ մոգ որոշում է սրբապղծել այդ՝ իր բնական պահանջը ներսը կատարելով: Իսկոյն է սատկում անբացատրելի չարիքի հետևանքով: Թէպէտև այդ նշանը ապացուցում է մինչև այդ պատահած հրաշքների աստուածային ծագումը, բայց դրանք անվերծանելի են մնում, ինչքան չվերականգնուեն բուժումների հեղինակների անունները յիշատակող աւանդոյթները:

Ճիշտն ասած, ճշմարտութիւնն իմացած վերջին ականատեսների ոսկորները տեղում այլևս չկան: Դանիէլ ծեր երեցը և նրա աշակերտը՝ ճիղբ ազգով մի կտրիճ, պարսիկների կողմից են գլխատուել: Այն ժամանակ ասորի աբեղաները տարել են Հակու նրանց դիակները և վանք են կառուցել: Ե՞րբ են պատահել այդ դէպքերը: Աղուանից Աշխարհի պատմութեան առաջին երկու գրքերի խմբագիրը կարծում է, թէ տեղի են ունեցել Ուռնայր՝ առաջին քրիստոնեայ արքայի հաջորդի՝ Քաջն Վաչէի օրերով: Պարսիկները միջամտած պիտի լինէին

իրենց աղուան դաշնակցի խնդրանքով ապստամբուած Ցրի քաղաքի բնակիչներին պատժելու համար: Իրօք ժամանակագրական ոչ մի դժուարութիւն չկայ ընդունելու, թէ 330-ական թուերին վկաների մասունքները բերուել են քրիստոնէական նոր դարձած գաւառում և Ցրի եկեղեցու պաշտօնեաները սպանուել են Գրիգորիսի մարտիրոսութիւնից 334 թուից յետոյ: Միայն թէ այն ժամանակ Արցախն Աղուանքի մաս չէր կազմում, այլ պատկանում էր Հայաստանին:

Յամենայն դեպս, սուրբ Գրիգորիսը, ինչպէս շուտով կհասկանանք, ուզելով յայտնաբերուել բարեպաշտն Վաչագանի կողմից, աղերսել է Զաքարիային և Պանտալիոնին, որ ամենամօտիկ կրօնական իշխանութեանը ներկայանան, Ցրիի նահատակների հանգստեան տեղը: Ուստիև Հակու վանքի առաջնորդ Յակոբին երևում են մի փառահեղ ծերունի և մի երիտասարդ, որոնք պահանջում են, որ ինքը Ցրի քաղաքի կառավարչի՝ Խոճկորիկի աջակցութեամբ, իրենց մասունքները հողից հանի, յայտնաբերի: Յակոբն այնքան ծոյլ և թերահաւատ է, որ չի ուզում տեսիլքին հնազանդուել, բայց **գերաբուն** հիւանդութեամբ է հարկադրւում շարժուելու: Միւս կողմից, Խոճկորիկ իշխանն այնքան ծանր քնով է ննջում, որ իսկոյն մրափում է մինչև տեսիլքը կարողանայ իրեն հետ խօսել: Սակայն երկուսը վերջապէս մի մասնատուփ են գտնում, որի վրայ ինքը՝ սուրբ Գրիգորիսը հետևեալն է գրել. «Ես՝ Գրիգորիսս, բերեցի այս սրբերին՝ Յովհաննու հայր՝ երջանիկ Զաքարիային, ինչպէս նաև երանելի Պանտալիոնին՝ Քրիստոսի մեծ մարտիրոս, որը վկայութիւնը տուեց Նիկոմեդիայ քաղաքում, և հենց այստեղ օրերս աւարտեցի» (ՀԱ I, 19 էջ 59-60):

Ցրիի մարտիրոսների ով լինելն յայտնող այս արձանագրութիւնը ժամանակակից ընթերցողին 2 փշոտ հարց է դնում: Նախ և առաջ՝ ի՞նչ լեզուով և այբուբէնով Գրիգորիսը այս բնագիրը գրեց: Ժամանակագիրը լռում է այդ մասին: Ի դէպ, IV դարում հայկական այբուբէնը դեռ գոյութիւն չունէր և չգիտենք, թէ Գրիգորիսը յունարէն կամ ուրիշ լեզուո՞վ էր գրում: Եթէ այդպիսի արձանագրութիւն գոյութիւն է ունեցել՝ կա՛մ կեղծ է, կա՛մ պետք է համարել, թէ պատմագրի կողմից յօրինուած մի գրական ստեղծագործութիւն է եղել, որով ուզում էր արտայայտել դէպքերի մասին իր կարծիքը:

Երկրորդ հարց. Գրիգորիսը Ցրիում չի վախճանուել, այլ Վատնեան դաշտում, Կասպից ծովի ափում: Ինչպէս կարող է գրած լինել թէ «Հենց այստեղ (Ցրիում) օրերս աւարտեցի»: Արձանագրութեան հեղինակին համաձայն, սուրբը Ցրիում գտնուելիս արդէն որոշել է նահատակուել և կանխաւ է իմանում, թէ իր դիակը Արցախ կվերադարձուի, ուստիև մի տեսակ կտակ է գրում, այնտեղ իսկ թողնելով իր առաքելութեանն ուղեկցող սրբոց նշխարներից մի մասը:

Պատմագիրն ինչպէ՞ս կարող է այնքան համոզուած լինել, դէպքերին տեղեակ լինել, որ համարձակուի Լուսաւորչի թոռանն այնպիսի գրութիւն վերագրել: Ձեռքի տակ ունեցած աղբիւրներից, 5-րդ դարի կեսերին Հոների Յու-

նան եպիսկոպոսի գրած յիշատակարանը վերաբերում էր յատկապէս անօրէն պարսիկ մոգի մահուանը, բայց ո՛չ եկեղեցու մասունքների որտեղից գալուն:

Այդ մասին միայն բերանացի աւանդոյթներ կային: Պէտք է կարծել, թէ գլխաւոր վկաների, այսինքն՝ Դանիէլի և ճիղբ երիտասարդի մահուամբ հանդերձ, վայրերի յիշողութիւնը յարատևել է: Աղուանից Պատմութեան առաջին երկու գրքերի ութերորդ դարի խմբագիրն այնպիսի տեղեկութիւններ է իմանում, որոնք Բարեպաշտն Վաչագանի վարքագրին յայտնի չեն: Օրինակ, նա գիտի, թէ Ցրիի երեցի անունը Դանիէլ է եղել, և թէ Զաքարիայից պահպանուել է միայն արիւնը, կամ էլ թէ ասորի աբեղաներ են Հակուի վանքը կառուցել: Այս տեղեկութիւնները հաւանաբար տեղական աւանդոյթներից է քաղել:

Բայց Ցրիում տեղի ունեցած տեսիլքները նոր աղբիւր են հանդիսանում աւանդութիւնը հարստացնելու համար: Շատ կարևոր են այդ տեսանկիւնից Յակոբի և Խոժկորիկի դանդաղումները, նրանք չեն ուզել սուրբ վկաների երևան գալը, տեսիլքները ինքնըստինքեան են եկել ծոյլ և անուշադիր աբբահօր և իշխանաւորի մօտ: Ուզած-չուզած Խոժկորիկն անկողնուց հանուել է Ցրիի եկեղեցում տեղի ունեցած մասունքների գիւտի ականատես լինելու համար, ինչի մասին ստիպուած զեկուցում գրեց Վաչագան արքային: Թէպէտև համեմատաբար նոր է կառավարչի կողմից կնքուած այս պաշտօնական նամակը, այնքան լաւ է փոխարինում գոյութիւն չունեցած 4-րդ դարի փաստաթղթերը, որ 6-րդ դարի պատմագիրն անվարան է վերականգնում, թէ ինչ ինքը՝ Գրիգորիսը պիտի գրէր:

Սակայն տեսիլքի սրբերը թէպէտև երևացել են, բայց անունները չեն ասել: 6-րդ դարի հեղինակն, ինչպէս նաև նրա ընթերցողները, բերանացի աւանդոյթից լաւ են իմանում, թէ նրանք Զաքարիան և Պանտալիոնն են, այդուհանդերձ Գրիգորիսի գրութիւնն այդ մասին աւելի մեծ հեղինակութիւն ունի: Այն վարկածն էլ չպիտի բացառենք, թէ հեղինակը խաղում է ընթերցողների հետ՝տեսիլքն այնպէս նկարագրելով, որ իսկոյն գուշակեն թէ ով է երևացել. «այր մի աւագաշուք» և «մի մանուկ արանց»: Միգուցէ Յակոբը և Խոժկորիկը կամ 6-րդ դարի ընթերցողները տեսել էին Զաքարիայի և Պանտալիոնի սրբապատկերները: Այդ դէպքում միտք ունէին, թէ ինչի նման են այդ սրբերը: Սակայն լոկ ենթադրանք է այդ մնում, քանի որ մեր ունեցած առաջին պատմագիտական տուեալները Աղուանքում գտնուող սրբապատկերների մասին աւելի ուշ են, քան Վաչագան 3-րդի թագաւորութիւնը: Յիշատակենք օրինակ Արցախի պատկերատեացներին, Հայոց կաթողիկոսների Մովսես 2-րդի (574-604) և Աբրահամ 1-ինի (607-611) օրօք: 684 թուին Հոների մօտ առաքուող Իսրայէլ աղուանից եպիսկոպոսի կողմից պատուիրուած խաչերը շատ հարուստ կենդանագիր նկարներով զարդարուած են, մասունքները պատկերներին զուգաւորելով: Այդպիսի պատկերագրութիւն զարգացնելը երկար ժամանակ է պահանջում: Ուրեմն, անհնա-

ին չպէտք է համարել, որ սրբապատկերներ (թեկուզ արտասահմանից բերուած) Աղուանքում են հանդիպել 5-րդ դարի վերջին կամ 6-րդ դարի սկզբին:

Յամենայն դէպս Զաքարիայի և Պանտալիոնի մասունքները յիշեցնում էին Քրիստոնէութեան տարածուելու երկու վճռական ժամանակաշրջան. սկզբնական տարիները, երբոր Քրիստոսը դեռ աշակերտների հետ միասին էր շրջում և Կոստանդնու խաղաղութիւնից առաջ վերջին փորձութիւնը՝ Դիոկղետիանոսի վերջին հալածանքը: Այդքան փառաւոր վկաներ, ո՞ւմ կարող էին մատչելի լինել. միայն Լուսաւորչի պատգամաւորին՝ Գրիգորիսին հնարաւոր էր այդպիսի գանձեր ձեռք բերել, որոնք նմանւում էին իր պապիկի Յունաց աշխարհից բերածներին: Իրօք, ակներև առնչութիւն ունեն Սուրբ Կարապետի և Սուրբ Աթանագինեսի այն մասունքները, որոնցով Լուսաւորիչը կործանել է Հայոց Մեծաց հեթանոսական տաճարները և Գրիգորիսի ընտրած Զաքարիայի և Պանտալիոնի սուրբ նշխարները, որոնցով հաւատքը քարոզեց ամբողջ Աղուանքում: Ի դէպ, Զաքարիան Կարապետի հայրն է. ըստ անվաւեր աւետարաններին, նահատակւում է որդու նման Հերոդոսի հրամանով: Իսկ Գալերոս կայսեր նախկին բժիշկը՝ Պանտալիոնը, Աթանագինէսի պէս զոհւում է Դիոկղետիանոսի ժամանակ: Սա հաստատում է, թէ միայն Գրիգորիսը, որպէս Լուսաւորչի կատարեալ հետեւորդ, կարող էր այդ սրբերին գտնել իր առաքելութիւնն առաջնորդելու համար:

Աւելին նկատենք. ներսից ներածուած այդ սրբերը կարծես թէ արմատացուել էին Աղուանքում: Ոչ միայն տեղացի տգէտ հեթանոսներին էին անդադար բուժում, այլև հետևորդներ էին ունեցել: Իրենց մասունքները պահող Դանիէլ երեցն ու ճիղբ երիտասարդը որոշ նմանութիւն էին ստացել նրանցից և նրանց նման նահատակուել:

***

Վաչագան արքայի համար այդ մասունքների յայտնաբերուելը համարժան էր մի աստուածային հրաւէրի, Աղուանքի մէջ դրանք ներածող սրբոյ նշխարքները վերագտնելու: Ճիշտն ասած, Բուզանդարանից բոլորը գիտէին, թէ սուրբ Գրիգորիսը հանգիստ էր գտել Ամարասի եկեղեցու մօտ: Միայն թէ, ինչպէս նախկին դէպքերում, աւանդոյթի յիշողութիւնն ընդհատուել էր Սասանեան մարզպանների ժամանակ: Ուստիև մոռացել էին ո՛չ մի յատուկ նշանով ցուցադրուած գերեզմանի ճշգրիտ տեղը: Պատմագիրը կռահում է, թէ այն պատճառով նշան չկայ, որովհետև վախենում էին, որ մէկը գար, մասունքները փախցնէր: Նկատենք միայն, թէ անհնարին էր սրբոյ անունը գրել, քանի որ այբուբէն չկար:

Այդ արկածին հանդիպելով, արքան նախ վարանում է՝ թէ ի՞նչ անի: Առաջին միտքն է պեղումներ կատարել տալ: Բայց ինչպէ՞ս կկարողանան այն

բազմաթիւ ոսկորները ճանաչել, որոնք անպայման կհայտնաբերուեն Ամարասի եկեղեցու շուրջը: Վաչագանը համոզւում է, թէ միայն աստուածային մի նշան կարող է օգնել մարդկային անկարողութեան: Այդ նշանը խնդրելու համար հրաւիրում է իշխանութեան բոլոր կղերականներին իր հայրենի գիւղում՝ Դիւտականում (Թալիշի և Մատաղիսի միջև Ջրաբերդ գաւառում) տեղի ունենալիք պահի և աղօթքի մի յատուկ վարժութեանը: Արքունիքի իշխաններին, եպիսկոպոսներին, երեցներին, ճգնաւորներին և բանակի զինուորներին հաւաքող այդ ժողովը, միացնելով եկեղեցու ուխտի, այսինքն՝ Քրիստոսի միստիքական մարմնի բոլոր բաղադրիչները, մի իսկական **սինհոդոսի** բոլոր յատկանիշներն ունի: Բացակայողների կամ ուշացողների դէմ նախատեսուած պատիժները ուժեղացնում են այդ վարկածը:

Թէպէտև սինհոդոսը սահմանափակուած է մէկ ազգային եկեղեցիով, բայց սրբոց նշխարքները շնորհում են իրեն տիեզերական չափանիշ: Զաքարիայից և Պանտալիոնից բացի հաւաքւում են ո՛չ միայն Աղուանքում ցիրուցան եղած բոլոր սրբերը, այլև Լուսաւորչի, Հռիփսիմէի և Գայանէի մասունքները, որոնք ուղարկել է Յովհաննէս Մանդակունին: Այդպիսի ուժեղ միջնորդութեամբ զօրէղացուած ժողովի աղօթքները, արքայութեան բոլոր գաւառներից եկող շատ նշաններ են ձգում: Դժբախտաբար այդ նշանները կա՛մ սխալ են մեկնաբանւում, այնպէս որ դրանց հիման վրայ ձեռնարկուող հետազօտութիւններն ապարդիւն են մնում, կա՛մ թերի են և պէտք է ամբողջացուեն ուրիշ տեսիլներից քաղուած լրացուցիչ նշանների միջոցով:

Այդուամենայնիւ, արքան չի յուսաբեկւում և չի դադարում որոնելուց: Քանի որ աղօթքներով և պահքերով հանդերձ նշանները իրեն չեն հասնում, ինքը պէտք է գնայ իրենց հանդիպի ամբողջ ժողովի հետ միասին (I, 21 էջ 70): Այն ժամանակուանից ի վեր, երբ որ ընդունել էր Զաքարիայի և Պանտալիոնի մասունքները, Վաչագանը սարքել է տուել մի շարժական եկեղեցի, որը նմանւում է Շահապիւանում եղած Արշակ Երկրորդի արքայական բանակի եկեղեցախորանին: Սակայն այն եկեղեցին, որը Վաչագանն իրեն հետ էր տեղափոխում եզներով լծուած սայլում, բաղկացած է 3 գօտիներից: Կենտրոնում գտնւում է մարտիրոսների յատուկ տաղաւարը: Այդ կարելի է պատկերացնել որպէս «շիկակարմիր խորան», այսինքն՝ կարմիր կաշուց, ներսում սպիտակ կտաւով պատուած մի տեսակ ...: Կարելի է համեմատել այդ նոյն գոյնով և նոյնաձև այն շքեղ վրանի հետ, ինչ Պարսիկների Շահանշահը նուիրել էր Մանուել Մամիկոնեան սպարապետին: Վերջինիս գագաթին ոչ թէ խաչ, այլ արծիւ էր կանգնած: Փակուած էր **որանակներով** և մէջը կար երկնագոյն հովանոց: (Յիշատակենք նաև Երուանդ արքայի վրանը):

Մարտիրոսների տաղաւարը մատչելի էր միայն այն կղերականներին, որոնք պատարագ էին մատուցում մասունքները ծածկող սուրբ սեղանի վրայ:

Շարժողական եկեղեցու երկրորդ գոտին բաղկացած էր տաղաւարը հովանաւորող մի մեծ վրանից: Այնտեղ էր թագաւորը մտնում բազմաթիւ կղերականների և ժողովրդականների հետ միասին:

Ամեն անգամ թագաւորը ծամբորդելիս, սրբերի մասունքները տեղափոխում էին մի շիկակարմիր կառքի վրայ, թանկարժեք քարերով զարդարուած մի խաչով, որի վրայ փորագրուած էր արքայի անունը: Այդպիսի շքերթային խաչեր հաւանաբար վաղ ժամանակներից ի վեր գոյութիւն են ունեցել քրիստոնէական Կովկասում: Դժբախտաբար հայկական հին նմուշներ չեն պահպանուել: Այսօրուայ իր վիճակում Աշոտ երկրորդի խաչից մնում է միայն երկաթեայ կորիզը, որից հանուել է թանկարժեք մետաղէ զարդարուած և նկարագրուած վերևի տախտակները: Վրացական կողմից յայտնի է մեզ Դաւիթ Տայքի Կուրոպաղատի խաչը. սա արծաթեայ է՝ ոսկի ծածկոյթներով և կրում է իշխանի անունը:

Կառքին լծուած սպիտակ ձիերի պոչը կարմիր գոյնով ներկուած էր և նրանց վզի մազերը պսակով էին զարդարուած: Նոյնատիպ զարդարանքներ կարելի է գտնել Սասանեան արուեստում: Օրինակ, 6-7-րդ դարերում որսորդութեան մի տեսարանում Շահանշահի ձիու վզի մազերը երկուստեք հիւսուած են: Մէջտեղի մազերը մի տեսակ փետուր են կրում: 5-7րդ դդ. առիւծի որսորդութեան մի նկար ցոյց է տալիս արքունի ձիու պոչը, նախշազարդ թելով կապուած:

Դիւտական գիւղից Արաժանք և Քարուէճից Ամարաս Վաչագանին տանող տեսիլք ու նշաններով աւարտւում է Աղուանից ամբողջ հողամասում, Զաքարիայի և Պանտալիոնի մասունքների հետ միասին, արքայի կատարած մի երկարատև քաւութիւնաբեր ուղևորութիւն:

Ամարաս հասնելիս վճռական տեղեկութիւն իրեն յաղորդող վերջին պատգամաւորը այն նոյն Խոճկորիկն է, որ բերել էր Լուսաւորչի թոռան առաջին կոչը: Ապացոյց անենք այդպիսով, թէ շրջանը բոլորուած է: Իր գերեզմանի ճշգրիտ տեղին իսկոյն ցոյց տալու փոխարէն, Սուրբ Գրիգորիսը նախընտրել է Վաչագանին անգիտակցաբար այն ճանապարհը կտրել տալ, ինչ ինքը հնուց կտրել էր սուրբ վկաների ուղեկցությամբ՝ Աղուանքը քրիստոնէացնելու համար: Ցրիից ելնելով այս ճանապարհը Ամարաս պէտք է դառնայ, քանի որ այնտեղ է Աղուանքի առաջին կաթողիկոսի տապանը: Բայց ճանապարհի ընթացքում Սասանեանների պիղծ իշխանութիւնից արթնացուած դիւային ազդեցութիւնները միանգամից մաքրուել են սուրբ մարտիրոսների նշխարներով:

Նշանակալից մի մանրամասնութեան անդրադառնանք. պատմուածքի սկզբին Խոճկորիկը հանդիսանում է որպէս մրափող և ոչ սրամիտ մի ծերունի: Բայց 23-րդ գլխի վերնագրից յանկարծակի իմանում ենք, թէ ինքն Արսուաղէն արքայի պոռնկորդին է եղել: Ոչ պատահաբար է հեղինակն այդ կարևոր տեղե-

կութիւնը մինչև պատմուածքի վերջին դրուագը գաղտնի պահել: Գրիգորիսի մասունքները գտնելով, Վաչագանը ոչ միայն Լուսաւորչի հետ խզուած կապը նորից է հաստատել, այլև հանդիպել է Մեսրոպ Մաշտոցի կողմից լուսաւորուած, ամենքից շատ զարգացած Արսուաղէն արքայի վերջին ժառանգորդին:

***

Պատմուածքի բարդ վիպասանական կառուցուածքը, դրուագների արհեստական հերթականութիւնը, պատմողի աչառու որոշումը ամենապարզ դէպքերի (օրինակ մրափ գիշերային ժամերգութեան ընթացքում) գերաբուն պատճառների վերագրելու, սկզբին մեծ վստահութիւն չեն ներշնչում ժամանակագրութեան-իրականութեան նկատմամբ:

Այդուամենայնիւ պատմուածքի դրամատիկան բեմադրութեամբ հանդերձ, որոշ տեղեկութիւնների ճշմարտութիւնն անվիճելի է երևում: Օրինակ, շատ հաւանական է Վաչագանի նկարագրութիւնը: Ակներև է, թէ այդ իրերն այնպէս են եղել ինչպէս հաստատում է պատմագիրը: Ինքն արքան այնքան պատկառանք է ունեցել դէպի Պանտալիոնի մասունքները, որ Շուշանիկ իր տիկնոջը հետ միասին այդ անունը դրին երկար տարիներով սպասուած իրենց անդրանիկ որդուն: Հետևաբար արքայի երկարատև ուխտագնացութիւնները աշխարհի մէկ ծայրից միւսը, ինչ էլ եղած լինի ճշգրիտ ճանապարհը, պէտք է ստուգուած իրականութիւն համարել:

Ընդհանրապէս նկատելի է թէ ինչ տրամաբանութեամբ պատմագիրը մեկնաբանում է արքայի կրօնական քաղաքականութիւնը,ոստիկանական հալածանքներ, կանոնական օրէնսդրութիւն, կրօնաքննութեան կազմակերպում, մասունքների միջոցով վայրերի սրբացում և բարեպաշտութեան մի նոր ձևի հաստատուելը հեթանոսական պաշտամունքները փոխարինելու համար: Վայրերին դարձրած ուշադրութիւնը նմանւում է այն կոստանդինեան գաղափարաբանութեանը, որը Հայաստանում էր տիրում երբ որ սուրբ Սահակ Պարթևը վերջնական ձևը տուեց Վաղարշապատի եկեղեցիներին:

Բանն այն է, որ Կոստանդնու գլխաւոր կրօնական խորհրդատու Եւսեբիոս Կեսարացին կարծում էր, թէ Տիրոջ Համբարձումից յետոյ նրա տնօրինութեան և կատարած հրաշքների տեղիները հաւատքի ամենավստահելի նշաններն էին դարձել: Այդ պատճառով յորդորել էր կայսերը Սուրբ Երկրի սրբավայրերը կառուցելու: Սակայն Առաքեալների աշխարհից-աշխարհ ուղևորութիւններն, իրենց իսկ մարտիրոսութիւններն և իրենց աշակերտներինը, թոյլ էին տալիս ամենահեռաւոր երկրներում յիշողութեան սուրբ վայրեր հաստատել: Հայաստանի դէպքում Աստուածաշնչի առաջին թարգմանութիւնից յետոյ Սուրբ Սահակը յօրինել է տալիս Լուսաւորչի վարքի հին խմբագրութիւնը (5-րդ դար), որից յետագայում կօգտուի Ագաթանգեղոս հեղինակը:

Այդ վարքում զետեղուած Լուսաւորչի տեսիլքն արդարացնում է Սուրբ Էջմիածնի կառուցումն այսպէս կոչուած իջման սեղանի շուրջը, ինչպէս նաև նահատակուած կուսանաց սրբավայրերի տեղերը: Նմանապէս հեթանոսական տաճարների կործանման պատմուածքը թելադրում է Հայաստանի գլխաւոր եկեղեցիների ուր լինելը:

Նոյն մեթոդին է դիմում աղուանական Քրիստոնէութիւնը վերահաստատող Վաչագանը: Իր թափած ջանքերը կենտրոնացնում է Գրիգորիսի վրայ: Ըստ 10-15 տարի առաջ յօրինուած Բուզանդարանին, համարում է նրան ամբողջ Աղուանքի իսկական լուսաւորչին, շեշտը դնելով յատկապէս հարաւային գաւառների վրայ: Ամարասը կրկնակի սուրբ է նկատւում թէ՛ Գրիգորիսի ոսկորների և թէ՛ Գրիգոր Լուսաւորչի հիմնադրած եկեղեցու պատճառով:

Սակայն քրիստոնէական պաշտամունքի ձևը պէտք է նախկին հեթանոսական սրբավայրերին ու ծեսերին յարմարուի, դրանք փոխարինելու համար: Բացօդեայ անապատ տեղիներում հաստատուող Աղուանքի հեթանոսական ծեսերը այն տպաւորութիւնն էին առաջացնում, թէ դիւային ազդեցութիւններ սփռուել են ամբողջ հողամասում: Տեղացի վկաների փառաւորումը և մասունքների տեղափոխումը միակ միջոցն էին հայթայթում՝ պէտք եղած սրբացումը այդ չարաշունչ և անանուն ոյժերը յարթելու և հալածելու համար: